## 8.Հարցում կատարելու մասին

(Կ. Տոնոյան)

ԳԻՀՀ-16/3-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

## 9. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին

*(Կ. Տոնոյան)*

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

## 10.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Տոնոյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ԳԻՀՀ-16/3-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման արդյունքների ամփոփման օրը 18.04.2016թ. ժամը 12:00-ին <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ ք.Գյումրի, Շիրակացի 21 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կ.Տոնոյան

Անդամներ՝ Ս. Արեստակեսյան

Վ. Մինասյան

Քարտուղար՝ Վանուհի Բախչինյան